

Հաստատված է
 01.09.2022
 ամբիոնի 1-ին նիստում
 ամբիոնի պետ՝

 (ստորագրություն)

 (ամիս ամսաթիվ)

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ	Անգլերեն լեզու
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՄԻՉ	
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Իրավագիտություն, անկա անվճար ուսուցում
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Իրավագիտություն
ԱՍԲԻՈՆ	Լեզուների ամբիոն E-mail: lezuneriambion@mail.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ	Ամբիոնի պետ, ոստ. գնդապետ Ա. Հայրապետյան E-mail: anialex-2011@mail.ru 094 45 64 34 Ամբիոնի դասախոս, ոստ. մայոր, մ.գ.թ. Մ. Առաքելյան E-mail: mariamarakelyan89@mail.ru 099 20 22 85
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՍՅԱԿ	2022-2023 ուստարի, 1-3 կուրս
ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ	Բակալավր

ԿՐԵԴԻՏՆԵՐ	
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ	Դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 250 ժամ գործնական պարապմունք, որից 1-ին կուրսում 114, 2-րդ կուրսում՝ 104 և 3-րդ կուրսում համապատասխանաբար 32 ժամ ծանրաբեռնվածությամբ:
ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ	Մուքային պահանջներ չկան, քանի որ դասընթացը սկսվում է զրոյական մակարդակից:

<p>ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ</p>	<p>Դասընթացի բովանդակությունը ներկայացված է հետևյալ բլոկների տեսքով՝</p> <ul style="list-style-type: none"> • Անգլերենի բազային քերականական հարացույց • Հիմնական բառաֆոնդ • Մասնագիտական բառապաշար • Լեզվական կադապարներ խոսքային գործունեության իրականացման համար • Լեզվամշակութային միավորներ • Ռեցեպտիվ (կարդալ, լսել) և ռեպրոդուկտիվ (խոսել, գրել) վարժությունների համակարգ • Մասնագիտական տեքստեր
<p>ՆՊՏԱԿ</p> <p>ԽՆԴԻՐ/ՆԵՐ</p>	<p>Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել լեզվական գիտելիքներ և ձևավորել անգլերեն լեզվով հաղորդակցվելու կարողություններ մասնագիտական գործունեության լիարժեք իրականացման համար: Ծրագրի ավարտին սովորողները պետք է հասնեն օտար լեզվի տիրապետման B2 մակարդակին:</p> <p>Դասընթացի խնդիրներն են՝</p> <ul style="list-style-type: none"> • Իրավապահ մարմնի ապագա աշխատակցի կողմից լեզվական հենքային գիտելիքների յուրացումը: • Հմտությունների և կարողությունների զարգացումը՝ ստացված լեզվական գիտելիքները մասնագիտական խնդիրների լուծման գործում կիրառելու համար: • Լեզվամշակութային կոմպետենցիայի ձևավորումը տարբեր սոցիալ-մշակութային հանրույթների հետ խոսքային գործունեության ծավալման նպատակով: • Շարունակական լեզվակրթության կոմպետենցիայի ձևավորումը՝ հետագայում ինքնուրույն կերպով լեզվական գիտելիքները պահպանելու և հարստացնելու համար:
<p>ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՑԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ</p> <p>1. Իմանա</p> <p>2. Կարողանա</p> <p>3. Տիրապետի</p>	<p>Սովորողները պետք է իմանան՝</p> <ul style="list-style-type: none"> • Անգլերենի բազային քերականության հարացույցը • Հիմնական բառաֆոնդի և մասնագիտական բառապաշարի հիմնական միավորները • Խոսքային ռեպրոդուկտիվ և ռեցեպտիվ գործունեության հիմնական կառույցները <p>Սովորողները պետք է կարողանան՝</p> <ul style="list-style-type: none"> • Դրսևորել բազային լեզվական գիտելիքներ • Գործնականում կիրառել լեզվական գիտելիքները լեզվական նյութի վերարտադրման համար • Համադրել լեզվական ֆոնային գիտելիքները բառարանի օգնությամբ մասնագիտական ոչ բարդ տեքստերի թարգմանությունների կատարման համար • Իրականացնել խոսքային գործունեություն՝ ծառայության

		<p>ընթացքում ծագած խնդիրների լուծման համար</p> <p>Սովորողները պետք է տիրապետեն</p> <ul style="list-style-type: none"> Յուրացված լեզվական գիտելիքներն անձանոթ համատեքստում ընդհանրացնելու և կիրառելու հմտություններին:
--	--	--

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	
Հիմնական	<ol style="list-style-type: none"> 1. Հայրապետյան Ա., <i>English for the Police Academy</i>, Զանգակ հրատարակչություն, Երևան 2011 2. Հայրապետյան Ա., <i>Ջրուցարան նստիկանության ծառայողների համար</i>, Զանգակ հրատարակչություն, Երևան 2012 3. Առաքելյան Մ., <i>English for Law Enforcement</i>, Երևան, 2022
Լրացուցիչ	<ol style="list-style-type: none"> 1. Richards, J. C., <i>Interchange</i>, Fourth Edition, Cambridge University Press 2013 2. Oxeden, C., <i>New English File</i>, Third Edition, Beginner, Oxford University Press 2011 3. Cunningham S., Moor P., <i>New Cutting Edge</i>, Elementary, Pre-intermediate, Longman 2005 4. Գեղարվեստական գրականության էլեկտրոնային կայքեր՝ Learn English Through Stories, Oxford Detective Stories, Cambridge Detective Stories.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ															
	<table border="1"> <tr> <td data-bbox="576 331 1066 398">Գնահատման արդյունարար միավոր</td> <td data-bbox="1066 331 1546 398">Գնահատականը տառանշումով</td> </tr> <tr> <td data-bbox="576 398 1066 432">18-20</td> <td data-bbox="1066 398 1546 432">Գերազանց</td> </tr> <tr> <td data-bbox="576 432 1066 465">13-17</td> <td data-bbox="1066 432 1546 465">Լավ</td> </tr> <tr> <td data-bbox="576 465 1066 499">8-12</td> <td data-bbox="1066 465 1546 499">Բավարար</td> </tr> <tr> <td data-bbox="576 499 1066 533">0-7</td> <td data-bbox="1066 499 1546 533">Անբավարար</td> </tr> <tr> <td data-bbox="576 533 1066 566">0</td> <td data-bbox="1066 533 1546 566">Չներկայացած/չի ներկայացրել</td> </tr> <tr> <td data-bbox="576 566 1066 600">Ստուգարքային գնահատում</td> <td data-bbox="1066 566 1546 600">Ստուգված/չստուգված</td> </tr> </table>	Գնահատման արդյունարար միավոր	Գնահատականը տառանշումով	18-20	Գերազանց	13-17	Լավ	8-12	Բավարար	0-7	Անբավարար	0	Չներկայացած/չի ներկայացրել	Ստուգարքային գնահատում	Ստուգված/չստուգված
Գնահատման արդյունարար միավոր	Գնահատականը տառանշումով														
18-20	Գերազանց														
13-17	Լավ														
8-12	Բավարար														
0-7	Անբավարար														
0	Չներկայացած/չի ներկայացրել														
Ստուգարքային գնահատում	Ստուգված/չստուգված														
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵՆԱՆԻՉՄՆԵՐ	<p>Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% առաջադիմություն:</p> <p>Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված»:</p> <p>Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝</p> <p>ա) «Գերազանց», եթե ունկնդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, պատասխանում է առաջադրված հարցերին, վերարտադրում է տեքստ(եր)ը, յուրացրել է բառապաշարը, այն կիրառում է այլ համատեքստերում, տիրապետում է անցած քերականական կառույցներին, կիրառում է դրանք խոսքային գործունեության մեջ, թեստային աշխատանքները կատարում է գրագետ, կարողանում է թարգմանել հանձնարարված նյութը:</p> <p>բ) «Լավ», եթե ունկնդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, պատասխանում է առաջադրված հարցերին, վերարտադրում է տեքստ(եր)ը, յուրացրել է բառապաշարը, այն կիրառում է այլ համատեքստերում, տիրապետում է անցած քերականական կառույցներին, կիրառում է դրանք խոսքային գործունեության մեջ, թեստային աշխատանքները կատարում է գրագետ, կարողանում է թարգմանել հանձնարարված նյութը և վերոհիշյալ առաջադրանքներում էական սխալներ թույլ չի տալիս:</p> <p>գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը և պատասխանում է առաջադրված հարցերի 50%-ից ավելին, վերարտադրում է տեքստի 1/2 մասը, յուրացրել է բառապաշարի 50%-ից ավելին, կարողանում է նոր բառերով կազմել նախադասություններ, պատկերացում ունի անցած քերականական կառույցի մասին, կարողանում է թարգմանել համեմատաբար հեշտ նախադասությունները:</p> <p>դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի տիրապետում անցած բառապաշարին, չի վերարտադրում տեքստի 1/2 մասը, չի կարողանում նոր բառերով կազմել նախադասություններ, չի տիրապետում անցած քերականական նյութին, չի կարողանում թարգմանել համեմատաբար հեշտ նախադասությունները:</p>														
ԱՅԼ															
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ															
	<p>Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի ուսանողին:</p>														

<p>Ներկայություն</p> <p>Գրավոր աշխատանքների ներկայացվող պահանջներ</p> <p>Ինքնուրույն և գործնական աշխատանքներ</p>	
	<p>Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:</p>
	<p>Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում:</p> <p>Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում ուսանողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:</p>

ԱՌԱՐԿԱՅԻ ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՂՄԱՆ ՔԱՐՏԵԶ

ՕՐ/ՇԱ ԲԱԹ	ԹԵՄԱ/ԺԱՄ	ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ	ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	ԳՆԱՀԱՏՈՒՄ
<p>1-ին կուրս 1-ին կիս.</p> <p>1-ին շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /2 ժամ /</p> <p>Այբուբեն Հնչյուն և տառ Չայնավոր հնչյուններ</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Ինտերակտիվ դասախոսություն • Բացատրում/ցուցադրում • Քննարկումներ <p>Նպատակը՝ ներկայացնել անգլերեն լեզվի այբուբենը, հնչյուն և հնչույթ հակադրությունը, ձայնավոր հնչյունների արտասանական կանոնները:</p> <p>Քննարկվող հարցերը՝ հայերենի և անգլերենի հնչյունական կազմի գուգադրական համեմատություն, լեզվի կատարելության չափանիշներ, լեզուների ցեղակցական կապ</p>	<ol style="list-style-type: none"> 1. Այբուբենի յուրաքանչյուր տառի և հնչյունի իմացություն ձևի և բովանդակության առումով 2. Չայնավորների արտասանական կանոնների վերաբերյալ գիտելիքների գործնական կիրառում վարժություններում 	<p>Ճանաչում է անգլերեն այբուբենի տառերը</p> <p>Տարբերակում է հնչյունը և տառը</p> <p>Թվարկում է ձայնավոր հնչյունները</p>
<p>2-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /4 ժամ /</p> <p>Բաղաձայնների արտասանությունը sh, ch, tch, th տառակապակցությունները</p> <p>Ողջույն, հրաժեշտ Դիմելու ձևեր</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Դասախոսություն/քննարկում • Բացատրում/ցուցադրում • Մտազրոհ <p>Նպատակը՝ Մտազրոհի միջոցով պարզել սովորողների իմացությունը անգլերեն լեզվով ողջույնի, հրաժեշտի և դիմելաձևերի լեզվական կաղապարների վերաբերյալ, դասախոսության միջոցով լրացնել բացերը, ներկայացնել բաղաձայնների և որոշ տառամիացությունների արտասանությունը բառերը ճիշտ ընթերցելու համար:</p> <p>Քննարկվող հարցերը՝ քաղաքավարի դիմելաձևերի նշանակությունը, քաղաքացու</p>	<ol style="list-style-type: none"> 1. Դասավանդված նյութի անսխալ կիրառում վարժություններում 2. Լեզվական կաղապարների բանավոր վերարտադրում: 	<p>Կարողանում է կիրառել sh, ch, tch, th տառակապակցությունների արտասանության կանոնները ընթերցանության մեջ</p> <p>Տիրապետում է ողջունելու, հրաժեշտ տալու և քաղաքավարի դիմելաձևի լեզվական կաղապարներին:</p>

		հետ կոնտակտի առաջին քայլերը:		
<p>3-րդ 2աբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /2 ժամ /</p> <p>Գոյական անուն Գոյականի հոգնակի թվի կազմությունը “To be” բայը</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Հակիրճ դասախոսություն • Ուսումնական առարկայական միջոցների կիրառում (Realia) <p>Նպատակը՝ լսարանային պարագաների միջոցով ցույց տալ և անվանել եզակի ու հոգնակի թվով առարկաները, դրանք կապակցել “To be” բայով</p> <p>Քննարկվող հարցերը՝ հայերենում և անգլերենում գոյականի հոգնակի թվի կազմության գուգադրական վերլուծություն</p>	<ol style="list-style-type: none"> 1. Դասավանդված լեզվական նյութի ամփոփում 2. Ռեցեպտիվ լսողական վարժություններ 3. Գոյականի հոգնակի թվի կազմության վերաբերյալ գրավոր առաջադրանքներ 	<p>Օգտագործում է գոյականի հոգնակի թվի կանոնը առարկաներ թվաչկելու համար</p> <p>Կիրառում է “To be” բայը ներկայանալու համար</p>
<p>4-րդ 2աբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /4 ժամ /</p> <p>Հոդ: Անորոշ և որոշիչ հոդ: Հոդի բացակայության որոշ դեպքեր</p> <p>Բայի անորոշ ձևը Հրամայական եղանակ</p> <p>Մաղթանքներ</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Հակիրճ դասախոսություն • Էլեկտրոնային ցուցադրում • Ուսումնական առարկայական միջոցների կիրառում (Realia) <p>Նպատակը՝ Բացատրել հոդը՝ որպես լեզվական նոր երևույթ անջատական տիպի լեզուներում, էլեկտրոնային ցուցադրմամբ կոնկրետ առարկաների միջոցով ավելի տեսանելի դարձնել հաշվելի և անհաշվելի գոյականների առանձնակատկությունները և ըստ այդմ՝ հոդի գործածության կանոնները: Բայի անորոշ ձևի հիման վրա ներկայացնել հրամայական եղանակը և գործնականում կիրառել մաղթանքներ արտահայտելու ձևով:</p> <p>Քննարկվող հարցերը՝ Անգլերենի որոշիչ հոդը և հայերենի որոշիչ առումը:</p>	<ol style="list-style-type: none"> 1. Փոքր թեստի կատարում հոդի տեղադրման վերաբերյալ 2. Հարց ու պատասխան 3. Մրցույթ / ուղեղափոթորիկ 4. Լեզվական գիտելիքների սինթեզման միջոցով գտնել նոր մաղթանքներ՝ օգտագործելով էլեկտրոնային բառարան 	<p>Կապակցում է անորոշ և որոշիչ հոդերը համապատասխան գոյականների հետ</p> <p>Ձևակերպում է հրամայական կառույցներ</p> <p>Տիրապետում է մաղթանքներ արտահայտելու բառապաշարին</p>

<p>5-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /2 ժամ/ Շեշտված ձայնավորների արտասանությունը բաղաձայն+լ-ից առաջ Wa, wh, ow, oo, ng, nk տառամիջությունների արտասանությունը Դերանուն: Անձնական և ցուցական դերանուններ Ծանոթություն (1-ին մաս)</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> Դասախոսություն/բացատրում Ընթերցանության ցուցադրում Դերախաղ <p>Նպատակը՝ բարելավել ընթերցանողական հմտությունները հնչյունաբանական կանոնների յուրացմամբ: Դերախաղի միջոցով ստեղծել ծանոթության բնական իրադրություն՝ գործնականում կիրառելու համար դասի ժամանակ ներկայացված բառապաշարը:</p> <p>Քննարկվող հարցերը՝ դասընկերոջ ներկայացում,անձնական տեղեկատվության ստացում:</p>	<ol style="list-style-type: none"> Ընթերցողական վարժությունների կատարում Գոյականների փոխարինում անձնական դերանուններով Մասնակցություն դերային խաղերում Ռեցեպտիվ լսողական վարժություններ 	<p>Կիրառում է բաղաձայն+լ-ից առաջ շեշտված ձայնավորների արտասանության և Wa, wh, ow, oo, ng, nk տառամիջությունների արտասանության կանոնները</p> <p>Թվարկում է անձնական և ցուցական դերանունները և կազմում է պարզ նախադասություններ</p>
<p>6-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /4 ժամ/ Շարադասություն Ձևի, չափ ու քանակի մակբայներ “I live in Yerevan” տեքստի բառապաշարի վերլուծություն</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> Ձևագնդի մեթոդ Բառային քարտեզ Հակիրճ դասախոսություն <p>Նպատակը՝ հասնել տեքստի բառապաշարի մեծ մասի յուրացմանը լսարանում ձևագնդի մեթոդի և բառային քարտեզի միջոցով, ներկայացնել “good/well” ածական/մակբայ հակադրությունը և հայերեն համարժեքները:</p>	<ol style="list-style-type: none"> Դասավանդված լեզվական նյութի ամփոփում Ուղեղափոթորիկ Բլից հարցում Ինքնուրույն գրավոր աշխատանք 	<p>Արտահայտում է գործողության կատարման պարբերականություն հաճախականության մակբայերի գործախումբ</p> <p>Տիրապետում է “I live in Yerevan” տեքստի բառապաշարին</p>
<p>7-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /2 ժամ/ Անորոշ ներկա ժամանակաձև (հաստատական) “I live in Yerevan” տեքստի</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> Ինտերակտիվ դասախոսություն Մտքերի ճառագայթաձև տարափ Բացատրական թարգմանություն Դերախաղ <p>Նպատակը՝ հասնել նրան, որ սովորողները</p>	<ol style="list-style-type: none"> Լսողական ռեպրոդուկտիվ վարժություններ Առօրյա գործողությունների արտահայտում Փոքր թեստ 	<p>Ձևակերպում է “I live in Yerevan” տեքստի թարգմանությունը</p> <p>Կարողանում է արտահայտել կրկնվող գործողություններ անորոշ ներկա</p>

	թարգմանություն Ծանոթություն (2-րդ մաս)	կարողանան ներկայի համատեքստում արտահայտել իրենց կատարած ամենօրյա գործողությունները, ամրապնդել թեման տեքստի բացատրական թարգմանությամբ և դերային խաղերով: Քննարկվող հարցերը` սահմանական եղանակի առանձնահատկությունները հայերենում և համարժեքը անգլերենում:		Ժամանակաձևի միջոցով Տիրապետում է ծանոթություն հաստատելու բառապաշարին
8-րդ շաբաթ	Գործնական պարապմունք /4 ժամ/ Ձայնավորների արտասանությունը 3-րդ դիրքում “a” ձայնավորը “I”+ բաղափայնից առաջ “a” ձայնավորը “sk”, “nt”, “ns”, “ss”, “ft”, “th”, “st” բաղաձայններից առաջ “au”, “ear”, “w+ar”, “w+or” Անորոշ ներկա ժամանակաձև (Ժխտական) “I live in Yerevan” տեքստի վերարտադրում	Տեսակը` գործնական պարապմունք <ul style="list-style-type: none"> Դասախոսություն/բացատրում Ընթերցանության ցուցադրում Գրատախտակի ռմբակոծություն Հակադրում Նպատակը` ներկայացնել ներկա համատեքստում չկատարվող գործողություններ, հակադրել նախասիրությունները, հնչյունաբանական կանոնների յուրացման շնորհիվ բարելավել ընթերցողական հմտությունները: Քննարկվող հարցերը` Ոստիկանության քուլեջի առօրյան	<ol style="list-style-type: none"> Քերականական թեստային հավելված Ընթերցանության վարժություններ Տեքստի ամփոփիչ հարցադրումներ 	Կարողանում է ճիշտ ընթերցել կիրառելով հնչյունաբանական կանոններ Արտահայտում է հաստատական և ժխտական գործողություններ անորոշ ներկայում Իր բառերով վերարտադրում է “I live in Yerevan” տեքստը
9-րդ	Գործնական	Տեսակը` գործնական պարապմունք	1. Բլից հարցում	Մատնանշում է

շաբաթ	<p>պարապմունք /2 ժամ/ Ստացական դերանուններ</p> <p>“We Study at the Police Academy” տեքստի բառապաշարի վերլուծություն</p>	<ul style="list-style-type: none"> • Բացատրական-ցուցադրական • Խճանկար (Ջիգտ) <p>Նպատակը՝ կարողանալ արտահայտել պատկանելություն՝ հստակ տարբերակելով դերանվան սեռը: Հարստացնել բառապաշարը ընդհանուր բառաֆոնդի և մասնագիտական բառապաշարի միավորներով “We Study at the Police Academy” տեքստի բառապաշարի վերլուծությամբ:</p> <p>Քննարկվող հարցերը՝ Դերանվան սեռը անգլերենում և համարժեք թարգմանությունը հայերենում:</p>	<ol style="list-style-type: none"> 2. Խճանկարի կազմում 3. 5 մտապահած բառերի թվարկում 	<p>պատկանելության հարաբերություններ ստացական դերանունների միջոցով</p> <p>Սխեմավորում է “We Study at the Police Academy” տեքստի բառապաշարն ըստ խոսքի մասերի</p>
10-րդ շաբաթ	<p>Գործնական պարապմունք /4 ժամ/ Ժամանակ և ուղղություն ցույց տվող նախդիրներ</p> <p>“We Study at the Police Academy” տեքստի բառային աշխատանք / թարգմանություն</p> <p>Հրավեր</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Բացատրական թարգմանություն • Իլյուստրացիա • Դերախաղ <p>Նպատակը՝ կարողանալ ցույց տալ ժամանակային և տարածական հարաբերություններ նախդիրների միջոցով: Լեզվական նյութը տեսանելի դարձնել էլեկտրոնային ցուցադրության միջոցով: Կիրառել նոր լեզվական գիտելիքը “We Study at the Police Academy” տեքստի թարգմանության մեջ: Պարզաբանել հրավերի լեզվական կաղապարները և օգագործել դերախաղում:</p> <p>Քննարկվող հարցերը՝ նախդիրների դիրքը անգլերենում և հայերեն համարժեքները:</p>	<ol style="list-style-type: none"> 1. Նախորդ դասերի ընթացքում դասավանդված նյութի ամփոփիչ առաջադրանքներ 2. Քարտեզագրում տեղի նախդիրների գործածությամբ 3. Թարգմանչական աշխատանք 	<p>Տարբերակում է տարածական և ժամանակային հարաբերություններ արտահայտող նախդիրները</p> <p>Կարողանում է թարգմանել “We Study at the Police Academy” տեքստը</p> <p>Տիրապետում է հրավերելու լեզվական կաղապարներին</p>
11-րդ շաբաթ	<p>Գործնական պարապմունք /2 ժամ/</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Վերարտարդողական մեթոդ • Դեմոնստրացիայի մեթոդ 	<ol style="list-style-type: none"> 1. Ավելացնել անձնական տեղեկատվություն վերարտարվող տեքստին: 	<p>Վերարտարում է “We Study at the Police Academy” տեքստը</p>

	<p>“We Study at the Police Academy” տեքստի վերարտադրում</p> <p>“My Working Day” տեսանյութ</p>	<p>Նպատակը՝ ծավալել ինքնուրույն խոսքային գործունեություն տեքստի վերարտադրման միջոցով: Ամրապնդել դասավանդված լեզվական նյութը “My Working Day” տեսանյութի ցուցադրմամբ, բացահայտել առկա դժվարություններն ու բացերը:</p>	<p>2. Պատասխանել տրված հարցերին տեսանյութի դիտումից հետո:</p>	<p>Նկարագրում է իր աշխատանքային օրը դիտած տեսանյութի հիման վրա</p>
<p>12-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /4 ժամ/</p> <p>Ձայնավորների արտասանությունը 4-րդ դիրքում “ou”, “igh” տառակապակցությունը</p> <p>Անորոշ ներկայի հարցական ձևը</p> <p>Խնդրանք, շնորհակալություն</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Բացատրական-ցուցադրական • Ընթերցանության ցուցադրում • Դերախաղ <p>Նպատակը՝ կարողանալ ձևակերպել հարցադրումներ ներկա համատեքստում, բարելավել ընթերցողական հմտությունները հնչյունաբանական կանոնների յուրացմամբ: Քաղաքացու հետ շփման ժամանակ հասկանալ հարցադրումն ու խնդիրը, տիրապետել խնդրանքի և շնորհակալության արտահայտման լեզվական կաղապարներին:</p> <p>Քննարկվող հարցերը՝ լեզվամտածողության տարբերությունները քաղաքավարի հարցման ժամանակ:</p>	<ol style="list-style-type: none"> 1. Ընթերցողական վարժություններ 2. Հարցերի կազմում դասընկերներից տեղեկատվության ստացման համար 3. Կարճ պատասխանների լրացում համապատասխան օժանդակ բայի գործածությամբ 	<p>Կիրառում է հնչյունաբանական կանոնները ճիշտ ընթերցանության համար</p> <p>Կազմում է հարցական նախադասություններ անորոշ ներկա ժամանակաձևում</p> <p>Տիրապետում է խնդրանքի և շնորհակալության բառապաշարին</p>
<p>13-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /4 ժամ/</p> <p>Քանակական և դասական թվականներ</p> <p>Ժամեր</p> <p>“Working Day” տեքստի բառապաշարի</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Բացատրական-ցուցադրական • Իլյուստրացիա • Լսողական վարժանքներ <p>Նպատակը՝ պատկերել օրվա ռեժիմը ըստ ժամերի, կարողանալ հաշվել գոյականները, հարստացնել ընդհանուր բառաֆոնդը և մասնագիտական բառապաշարը “Working Day” տեքստի բառապաշարի վերլուծությամբ</p>	<ol style="list-style-type: none"> 1. Բանավոր հարց ու պատասխան 2. Լսարանային պարագաների թվարկում ըստ քանակի 3. Բառային քարտեզի կազմում 	<p>Բանավոր վերարտադրում է օրվա ռեժիմը</p> <p>Ճանաչում է քանակական և դասական թվականները և օգտագործում է բանավոր խոսքում</p>

	վերլուծություն	Քննարկվող հարցերը՝ Շրջուն շարահասությունը անգլերենում և հայերենում ժամերի ձևակերպման մեջ:		
14-րդ շաբաթ	Գործնական պարապմունք /2 ժամ/ “Working Day” տեքստի թարգմանություն Մասնավոր հարցեր Ներողություն Բառապաշարի և քերականության ամփոփում	Տեսակը՝ գործնական պարապմունք <ul style="list-style-type: none"> • Հակիրճ դասախոսություն • Ճառագայթաձև հարցում • Մտազրոհ • Բացատրական թարգմանություն Նպատակը՝ կարողանալ ձևակերպել հարցեր բազմաբնույթ տեղեկատվության ստացման համար, յուրացնել քաղաքացուն մոտենալիս ներողություն խնդրելու լեզվական կաղապարները: 1-ին կիսամյակի ընթացքում յուրացված բառապաշարի և քերականական կառույցների վերհիշում, հիշողության մեջ ակիտիվացում: Քննարկվող հարցերը՝ Բայի հարցական ձևը մասնավոր հարցերի կառույցում, հաճախակի կրկնվող սխալներ, դժվարություններ	<ol style="list-style-type: none"> 1. Նախորդ դասերի ընթացքում դասավանդված լեզվական նյութի արագ ամփոփում 2. Մասնավոր հարցերի կազմում դասընկերներից տեղեկատվության ստացման համար 3. Տեքստի բանավոր թարգմանություն 4. Տեքստի բառապաշարով կազմված խաչբառի լուծում 5. Կրկնողության առաջադրանքներ 	Կարողանում է թարգմանել Working Day” տեքստը Կարողանում է կազմել մասնավոր հարցեր ներկա անորոշ ժամանակաձևում Տիրապետում է ներողություն խնդրելու բառապաշարին Տիրապետում է անցած քերականական կառույցներին և բառապաշարին
1-ն կուրս 2-րդ կիս.	Գործնական պարապմունք /4 ժամ/ “Working Day” տեքստի բանավոր վերարտադրում	Տեսակը՝ գործնական պարապմունք <ul style="list-style-type: none"> • Վերարտադրողական մեթոդ • Ճառագայթաձև հարցում • Դերախաղ Նպատակը՝ կարողանալ բանավոր վերարտադրել տեքստը, ձևակերպել հարցեր բազմաբնույթ տեղեկատվության ստացման համար, արտահայտել համաձայնություն կամ անհամաձայնություն տարբեր խնդրահարույց	<ol style="list-style-type: none"> 1. Հարցերի աղյուսակի կազմում 2. Կարճ և երկար պատասխանների կազմում 3. Տեքստի վերաշարադրում 4. Փոքր էսսե 5. Բառային աշխատանք 6. «Լեզու» բաժնի կառույցների անգիր իմացություն 	Իր բառերով վերարտադրում է “Working Day” տեքստը Տիրապետում է համաձայնություն և անհամաձայնություն արտահայտելու լեզվական կաղապարներին
15-րդ շաբաթ	Մասնավոր հարցեր Մեփական աշխատանքային օրվա			

	<p>բանավոր նկարագրություն</p> <p>Համաձայնություն/անհանձայնություն</p> <p>Լեզու</p>	<p>Իրավիճակներում: Յուրացված բառապաշարի և քերականական նյութի հիման վրա վերաշարադրել սեփական աշխատանքային օրը, կարողանալ տալ անձնական տեղեկատվություն: Հարցադրումներ կատարել և հասնականալ, թե քաղաքացին ինչ լեզվով է խոսում, անհրաժեշտության դեպքում թարգմանիչ հրավիրել:</p> <p>Քննարկվող հարցերը` համաձայնության OK, All right ձևերի գործածումը խոսակցական և չեզոք համատեքստերում, նախասիրություններ, աշխատանքային գրաֆիկ, լեզուներ:</p>		<p>Մինթեզելով ձեռք բերված լեզվական գիտելիքները նկարագրում է իր սեփական աշխատանքային օրը</p> <p>Տիրապետում է օտրաերկրյա քաղաքացիների հետ շփման առաջին անհրաժեշտության լեզվական կաղապարներին</p>
<p>16-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /4 ժամ/</p> <p>“Iy” մակբայակերտ վերջածանց</p> <p>Ենթակային և նրա լրացումներին տրվող հարցերը</p> <p>Քաղաքային տրանսպորտ</p> <p>Գոյականի հոլովը “At the English Lesson” տեքստի բառապաշարի վերլուծություն</p> <p>Ինչպե՞ս կողմնորոշվել քաղաքում (1-ին մաս)</p>	<p>Տեսակը` գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Հակիրճ դասախոսություն • Խմբային հետազոտության մեթոդ • Դերախաղ • Բացատրական/ցուցադրական մեթոդ <p>Նպատակը` լսարանում կազմելով խմբեր՝ ձևակերպել հարցեր և ուղղել մյուս խմբին, հարցերի մեջ ներառել քաղաքային տրանսպորտին վերաբերող բառապաշարը: Հասնել այն վերջնարդյունքին, որ սորողները կարողանան արտաքին ծառայության ժամանակ զբոսաշրջիկների հարցը հասկանան որևէ տեղ գնալու վերաբերյալ և բացատրեն: Ստեղծագործական խաղերի միջոցով վերլուծել նոր տեքստի բառապաշարը, հասնել բառապաշարի մեծ մասի յուրացմանը լսարանում:</p> <p>Քննարկվող հարցերը` մակբայակերտ</p>	<ol style="list-style-type: none"> 1. Տրված անդամի փոխարինման վարժություններ 2. Տրված անդամին հարցերի ուղղման վարժություններ 3. Ածական/մակբայ ընտրության վարժություններ 4. Քերականական բազմատարբերակային թեստ 5. Նոր բառերի օգտագործում նախադասություններում 6. Թարգմանություն 	<p>Կարողանում է կազմել մակբայեր՝ օգտագործելով մակբայակերտ վերջածանցներ</p> <p>Կարողանում է ուղղել հարցեր ենթակայի լրացումներին</p> <p>Տիրապետում է քաղաքային տրանսպորտի բառապաշարին</p> <p>Դասակարգում է գոյականներն ըստ հոլովվելու առանձնահատկությունների, կարողանում է հոլովել</p> <p>Տիրապետում է “At the English Lesson” տեքստի բառապաշարին</p>

		վերջածանցը հայերենում և անգլերենում, անհամապատասխանության դեքայեր, գրոսաշրջիկների կողմից հաճախ տրվող հարցեր, խնդրահարույց իրավիճակներ:		Կարողանում է հարցնել ուղղություններ և տալ պատասխաններ
17-րդ շաբաթ	<p>Գործնական պարապմունք /4 ժամ/</p> <p>Հաճախականության մակբայեր</p> <p>Some/any անորոշ դերանունները</p> <p>Գոյականի հոլովը “At the English Lesson” տեքստի բառապաշարի ամփոփում</p> <p>Ինչպե՞ս կողմնորոշվել քաղաքում (2-րդ մաս)</p> <p>Բայի անորոշ ձևը՝ որպես նպատակի պարագա</p> <p>“At the English Lesson” տեքստի թարգմանություն</p> <p>Հյուրանոց, իջևանատուն</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Հակիրճ դասախոսություն • Ձևագնդի մեթոդ • Լսողական վարժանքներ • Բացատրական/ցուցադրական մեթոդ • T-ձև մեթոդ • Դերախաղ • Բացատրական թարգմանություն <p>Նպատակը՝ արտահայտել գործողության կատարման պարբերականություն և կիրառել խոսքային գործունեության մեջ: Ներկայացնել գոյականի անորոշ քանակի արտահայտման կառույցներին հաստատական, ժխտական և հարցական նախադասություններում: Յուրացված բառապաշարը կիրառել տեքստի թարգմանության մեջ: Կարողանալ արտահայտել գործողության կատարման նպատակ: Հասնել այն վերջարդյունքին, որ գտնվելով արտերկրում ուստիկանության ծառայողը կարողանա ինքնուրույն հյուրանոց գտնել և պատվիրել համար:</p> <p>Քննարկվող հարցերը՝ գոյականի անորոշ քանակի արտահայտման ձևերը անգլերենում և հայերեն համարժեքների բացակայությունը, նպատակի արտահայտման կառույցները հայերենում և անգլերենում</p>	<ol style="list-style-type: none"> 1. Փոխադարձ հարցադրումներ գործողությունների կատարման հաճախականության վերաբերյալ 2. Փոքր թեստի կատարում 3. Պատճառ-հետևանքային կապ արտահայտող վարժությունների կատարում 4. Միացման (matching) տիպի վարժություններ 5. Ակտիվ բառապաշարի ամփոփում 	<p>Տարբերակում է հաճախականության մակբայերը և կիրառում բանավոր խոսքում</p> <p>Դասակարգում է նախադասություններն ըստ տեսակների և պատճառաբանում է Some/any անորոշ դերանունների գործածությունը</p> <p>Տիրապետում է “At the English Lesson” տեքստի բառապաշարին</p> <p>Կարողանում է բանավոր թարգմանել “At the English Lesson” տեքստը</p> <p>Տիրապետում է հյուրանոցի և իջևանատան համատեքստային բառապաշարին</p>

<p>18-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /4 ժամ/ Բարդ ստորադասական նախադասություն “At the English Lesson” տեքստի վերարտադրում</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Վեբ որոնում • Դասախոսություն/քննարկում • Ինտեգրատիվ դաս <p>Նպատակը՝ ինտերնետային ռեսուրսների օգտագործում ինքնակրթության և շարունակական կրթության նպատակով:</p> <p>Քննարկվող հարցերը՝ մեդիատեքստերի օգտագործումը ուսումնական նպատակներով</p>	<ol style="list-style-type: none"> 1. Նախորդ դասերի ընթացքում յուրացված լեզվական նյութի ամփոփում 2. Տեքստի վերաշարադրում 3. Ինքնուրույն աշխատանք 	<p>Կարողանում է իր բառերով վերարտադրել “At the English Lesson” տեքստը</p> <p>Կազմում է բարդ ստորադասական նախադասություններ սինթեզելով երկու պարզ նախադասություն</p>
<p>19-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /4 ժամ/ “oa” “sure” “ea” “aw” “o+ld” “o+st” “ing” գոյականակերտ վերջածանցը Հասարակական կարգ ու կանոն Որոշիչ երկրորդական նախադասություններ “My Friend” տեքստի բառապաշարի վերլուծություն Շաբաթվա օրեր</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Դերախաղ • Լսողական վարժանքներ • Դեմոնստրացիա • Բացատրական/ցուցադրական • Բառային քարտեզ • Ինտեգրատիվ հարցում <p>Նպատակը՝ հասնել այն վերջնարդյունքին, որ արտաքին ծառայության ժամանակ ոստիկանության ծառայողը կարողանա օտարերկրացուն բացատրել իրավախախտման վերաբերյալ: Բարելավել ընթերցանության հմտությունները: Ներկայացնել խոսույթի պարզ և բարդ ձևերը, կիրառել նոր քերականական նյութը ընկերոջը կամ գործընկերոջը ներկայացնելու համար:</p> <p>Քննարկվող հարցերը՝ հաճախ կրկնվող իրավախախտումներ, խնդրահարույց իրավիճակներ, բարդ ստորադասական նախադասությունների կառուցվածքը</p>	<ol style="list-style-type: none"> 1. Բառապաշարի սերտում 2. Նոր բառերի ավելացում 3. Ընթերցանություն յուրացված հնչյունաբանական կանոնների գործադրմամբ 4. Փոխակերման քերականական վարժություններ 5. Տեքստի բառապաշարի վերաբերյալ խաչբառի լուծում 6. Շաբաթական ռեժիմի կազմում 	<p>Տիրապետում է հասարակական կարգ ու կանոնի համատեքստային բառապաշարին</p> <p>Կարողանում է կատարել բառակազմական աշխատանք “ing” գոյականակերտ վերջածանցով</p> <p>Նկարագրում է իր շաբաթական ռեժիմը շաբաթվա օրերի միջոցով</p> <p>Բացատրում է “My Friend” տեքստի անձանոթ բառերը</p> <p>Կարողանում է կազմել որոշիչ երկրորդական նախադասություններ</p> <p>Տիրապետում է անցած քերականական նյութին և</p>

		անգլերենում և հայերենում:		բառապաշարին, գործնականում կիրառում է յուրացված լեզվական նյութը վարժություններում
20-րդ շաբաթ	<p>Գործնական պարապմունք /4 ժամ/</p> <p>“My Friend” տեքստի թարգմանություն</p> <p>Ընկերոջ ներկայացում</p> <p>Մասնավոր հարցեր “to be” բայով</p> <p>“My Friend” տեքստի վերարտադրում</p> <p>Փաստաթղթեր</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Բացատրական թարգմանություն • Ճառագայթաձև հարցում • Պրոբլեմային ուսուցում • Վերարտադրողական մեթոդ • Դերախաղ <p>Նպատակը՝ յուրացված բառապաշարը գործնականում կիրառել տեքստի թարգմանության մեջ: Համադրելով նոր բառապաշարն ու լեզվական ֆոնային գիտելիքները ինքնուրույն ներկայացնել սեփական ընկերոջը, ձևակերպել իրավիճակային հարցեր “to be” բայով: Հասնել այն վերջնարդյունքին, որ ուստիկանության ծառայողը կարողանա քաղաքացուց պահանջել փաստաթղթեր և արձանագրի խնդիրը: Տեքստի վերարտադրում յուրացված բառապաշարի օգտագործմամբ</p> <p>Քննարկվող հարցերը՝ փաստաթղթերի տեսակները արտասահմանում և Հայաստանում:</p>	<ol style="list-style-type: none"> 1. Փոքր էսսե 2. Գրավոր թարգմանություն 3. Հարցերի աղյուսակի կազմում 4. Տեքստի կրճատում և վերաշարադրում 5. Փաստաթղթերի բառապաշարի սերտում 	<p>Կարողանում է թարգմանել տեքստը և տեքստի բառապաշարը կիրառել խոսքային գործունեության մեջ</p> <p>Վերաշարադրում է “My Friend” տեքստը</p> <p>Կարողանում է կազմել մասնավոր հարցեր և տալ պատասխաններ</p> <p>Տիրապետում է փաստաթղթերի պահանջման բառապաշարին</p>
21-րդ շաբաթ	<p>Գործնական պարապմունք /4 ժամ/</p> <p>“to have” բայը անորոշ ներկա ժամանակաձևով</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Բացատրական/ցուցադրական մեթոդ • Դերախաղ 	<ol style="list-style-type: none"> 1. Հարցերի աղյուսակի կազմում 2. Ճիշտ ժամանակաձևի լրացման քերականական վարժություններ 	<p>Նկարագրում է տրված առարկաներն ըստ գույների</p>

	<p>Վթար</p> <p>Many/much, Few/little քանակական ածականներ</p> <p>Բնակարանի նկարագրության բառապաշար</p> <p>Գույներ</p>	<ul style="list-style-type: none"> • Մտագրոհ • Իլյուստրացիայի մեթոդ • Խճանկար <p>Նպատակը՝ կարողանալ վթարի դեպքում հարցաքննել վկաներին, ցուցաբերել առաջին օգնություն, կանչել շտապօգնություն:</p> <p>Քննարկվող հարցերը՝ ուստիկանության ծառայողի գործողությունները վթարի դեպքում: Ներկայացնել բնակարանի՝ որպես դեպքի վայրի, նկարագրության համար անհարժեշտ բառապաշարը, ամրապնդել ներկայացված բառապաշարը գույների ցուցադրման և բառակապակցությունների կազմման միջոցով:</p>	<ol style="list-style-type: none"> 3. Վթարի բառապաշարի սերտում 4. Քանակական ածականների լրացման վերաբերյալ քերականական վարժություններ 5. Ինտերներտային ռեսուրսների օգտագործմամբ բնակարանի նկարագրության բառապաշարի ամփոփում 	<p>Տիրապետում է վթարի համատեքստային բառապաշարին</p> <p>Կարողանում է արտահայտել առարկաների քանակ</p>
<p>22-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /4 ժամ/</p> <p>“My Brother’s Flat” տեքստի թարգմանություն և վերարտադրում</p> <p>Տեղ և ուղղություն ցույց տվող նախդիրներ</p> <p>Տրված բնակարանի նկարագրություն</p> <p>Կորցրած իրեր</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Դասախոսություն/երկխոսություն • Բացատրական թարգմանություն • Բառային քարտեզ • Մտագրոհ • Դերախաղ • Ուսուցում գործողությամբ (Action Learning) <p>Նպատակը՝ նախորդ դասի ընթացքում դասախոսի կողմից տրված և ինքնուրույն վերորոնման արդյունքում ձեռք բերված բառապաշարը գործնականում կիրառել “My Brother’s Flat” տեքստի թարգմանության մեջ: Հասնել այն վերջնարդյունքին, որ սովորողները կարողանան նկարագրել բնակարան որպես դեպքի վայր, ինչպես նաև հասկանան վկայի կամ տուժողի կողմից կատարված նկարագրությունը: Բառային</p>	<ol style="list-style-type: none"> 1. Տեքստի գրավոր թարգմանություն 2. Երկխոսության կազմում կորցրած իրերի վերաբերյալ 3. Փոքր էսսե որևէ բնակարանի նկարագրության վերաբերյալ 4. Բնակարանի և կորցրած իրերի բառապաշարի վերաբերյալ բլից հարցման նախապատրաստում 	<p>Տիրապետում է կորցրած իրերի համատեքստային բառապաշարին</p> <p>Կարողանում է ներկայացնել ինքնուրույն կազմած երկխոսություն (ցանկության դեպքում դասընկերոջ հետ)</p> <p>Կարողանում է թարգմանել “My Brother’s Flat” տեքստը</p> <p>Կարողանում է քաղաքի քարտեզի վրա տարբեր օբյեկտների տեղակայման նկարագրությունը տալ</p>

		<p>քարտեզի տեսքով ներկայացնել քաղաքացու կողմից իրեր կորցնելու իրավիճակում անհրաժեշտ բառապաշարը:</p> <p>Քննարկվող հարցերը՝ ուստիկանության ծառայողի գործողությունները կորցրած իրերի խնդրով դիմած օտարերկրացի քաղաքացու հետ, տարածական հարաբերությունների արտահայտման եղանակները անզլերենում և հայերենում:</p>		Բանավոր նկարագրում է տրված բնակարանը
23-րդ շաբաթ	<p>Գործնական պարապմունք /4 ժամ/ Ներկա շարունակական ժամանակաձև (հաստատական)</p> <p>“Our Police Academy and Our Studies” տեքստի բառապաշարի վերլուծություն</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Բացատրական/ցուցադրական մեթոդ • Ինտերակտիվ հարցում <p>Նպատակը՝ ներկայացնել ներկա կոնտեքստում և խոսելու պահին կատարվող գործողությունների արտահայտման տարբերությունները անզլերենում: հարստացնել բառաշաշարը “Our Police Academy and Our Studies” տեքստի բառապաշարի վերլուծությամբ:</p> <p>Քննարկվող հարցերը՝ ժամանակաձևերի հարացույցի իմաստային դաշտը անզլերենում և հայերեն համարժեքների բացակայությունը: «Հիմա» մակբայի գործածումը հայերենում ներկա շարունակական ժանակաձևի արտահայտման համար:</p>	<ol style="list-style-type: none"> 1. Անորոշ ներկա ժամանակաձևի վերաբերյալ քերականական գրավոր վարժություններ (բայերի խոնարհում, թարգմանություն, ճիշտ ժամանակաձևի ընտրություն) 2. Նոր տեքստի բառապաշարի սերտում 	<p>Տիրապետում է “Our Police Academy and Our Studies” տեքստի բառապաշարին</p> <p>Կարողանում է արտահայտել խոսելու պահին կատարվող գործողություններ ներկա շարունակական ժամանակաձևի կիրառմամբ</p>
24-րդ շաբաթ	<p>Գործնական պարապմունք /4 ժամ/ Ներկա շարունակական ժամանակաձև (ժխտական</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Գնդակի մեթոդ • Բացատրական/ցուցադրական մեթոդ • Խճանկար (Ջիգսո) • Դերախաղ 	<ol style="list-style-type: none"> 1. Տեքստի գրավոր թարգմանություն 2. Փոքր թեստ 3. Անձի արտաքին հատկանիշների բառապաշարի 	Կիրառում է անձի արտաքինի նկարագրողական ածականները կասկածյալի նկարագրության համար

	<p>և հարցական)</p> <p>“Our Police Academy and Our Studies” տեքստի թարգմանություն և վերարտադրում</p> <p>Անձի արտաքին հատկանիշներ</p> <p>Կասկածյալի նկարագրություն</p>	<ul style="list-style-type: none"> • Ճառագայթաձև հարցում • Իլյուստրացիայի մեթոդ <p>Նպատակը՝ ներկայացնել խոսելու պահին կատարվող գործողությունների ժխտում արտահայտող ձևը, կիրառել յուրացված բառապաշարը “Our Police Academy and Our Studies” տեքստի թարգմանության մեջ, կատարել անձի արտաքին հատկանիշների վերաբերյալ բառապաշարի վարժանքներ: Հասնել այն վերջնարդյունքին, որ սովորողները կարողանան հասկանալ անձի արտաքինի նկարագրությունը՝ տրված տուժողի կամ վկայի կողմից, ձևակերպել լրացուցիչ հարցեր ճշտումներ կատարելու նպատակով, ինքնուրույն նկարագրեն տրված նկարում պատկերված կասկածելի անձին: Տեքստի վերարտադրման համար օգտագործել ներկա շարունակական ժամանակաձևը, ձևակերպել հարցեր ժամանակաձևի կիրառմամբ:</p> <p>Քննարկվող հարցերը՝ կասկածյալի նկարագրության դեպքերը ծառայության ընթացքում, անգլերենի իմացության խիստ անհրաժեշտությունը նման դեպքերում:</p>	<p>սերտում</p> <ol style="list-style-type: none"> 4. Փոքր էսսե 5. Քերականական վարժություններ ներկա շարունակական ժամանակաձևի վերաբերյալ 6. Տեքստի վերաշարադրում 7. Կրկնողության վարժություններ 	<p>Թվարկում է մարմնի մասերը</p> <p>Կարողանում է բանավոր խոսքում կիրառել ներկա շարունակական ժամանակաձևի ժխտականը և հարցականը</p> <p>Ըստ նկարների նկարագրում է անձի արտաքինը</p> <p>Կարողանում է կազմել մասնավոր հարցեր քննիչ/վկա դետեկտիվ խաղում</p> <p>Վերարտադրում է “Our Police Academy and Our Studies” տեքստը</p> <p>Տիրապետում է անցած քերականական նյութին և բառապաշարին, կիրառում է գործնականում</p>
<p>25-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարավունք /4 ժամ/</p> <p>“ern” ածականակերտ վերջածանց</p> <p>Անորոշ անցյալ ժամանակաձև</p>	<p>Տեսակը՝</p> <ul style="list-style-type: none"> • Բացատրական/ցուցադրական • Բառային քարտեզ • Ինտերակտիվ հարցում <p>Նպատակը՝ ներկայացնել անցյալում կատարված գործողությունների արտահայտման ձևը:</p>	<ol style="list-style-type: none"> 1. Անկանոն բայերի ցանկից բայերի խոնարհում 2. Տեքստի բառապաշարի սերտում 3. Նախորդ շաբաթվա ռեժիմի վերաբերյալ փոքր էսսե 	<p>Տիրապետում է “In the Country” տեքստի բառապաշարին</p> <p>Տիրապետում է անկանոն բայերի ցանկին</p>

	(հաստատական) “In the Country” տեքստի բառապաշարի վերլուծություն	Քննարկվող հարցերը՝ անկանոն բայերը հայերենում և անգլերենում:		
26-րդ շաբաթ	Գործնական պարապմունք /4 ժամ/ “to be” բայը անորոշ անցյալ ժամանակաձևով “there+to be” կառույցը անորոշ անցյալով Անկանոն բայեր “In the Country” տեքստի բառապաշարի վերլուծություն	Տեսակը՝ գործնական պարապմունք <ul style="list-style-type: none"> • Բացատրական/ցուցադրական • Ձևագնդի մեթոդ Նպատակը՝ կարողանալ ներկայացնել անցյալի իրավիճակներ, նկարագրել տեղանքը անցյալ համատեքստով: Հարստացնել ընդհանուր բառապաշարը “In the Country” տեքստի բառապաշարի վերլուծությամբ: Քննարկվող հարցերը՝ «լինել» պակասավոր բայը հայերենում և “to be” անկանոն բայը անգլերենում:	<ol style="list-style-type: none"> 1. Տեղադրման քերականական վարժություններ 2. Բառային աշխատանք 3. Տեղանքի նկարագրություն “there+to be” կառույցի անորոշ անցյալով 	<p>Տիրապետում է “In the Country” տեքստի բառապաշարին</p> <p>Կարողանում է նկարագրել դեպքի վայր “there+to be” կառույցի օգնությամբ</p> <p>Կարողանում է խոնարհել “to be” բայը անորոշ անցյալ ժամանակաձևով և կիրառել բանավոր խոսքում</p>
27-րդ շաբաթ	Գործնական պարապմունք /4 ժամ/ Անորոշ անցյալ ժամանակաձև (ժխտական) “In the Country” տեքստի թարգմանություն Ամսաթվեր	Տեսակը՝ գործնական պարապմունք <ul style="list-style-type: none"> • Բացատրական /ցուցադրական • Բացադրական թարգմանություն • Մտազրոհ • Լսողական վարժանք Նպատակը՝ կարողանալ արտահայտել անցյալում տեղի չունեցած գործողություններ, տալ անցյալի որևէ ժամանակակետում կատարված գործողության ժխտական պատասխան, ներկայացնել անցյալում կատարված դեպքեր ըստ ամսաթվերի,	<ol style="list-style-type: none"> 1. Ձևափոխման քերականական վարժություններ 2. Տեքստի գրավոր թարգմանություն 3. Անկանոն բայերի աղյուսակում բացթողումների լրացում 	<p>Կարողանում է բանավոր թարգմանել “In the Country” տեքստը</p> <p>Թվարկում է իրադարձություններն ըստ ամսաթվերի</p> <p>Կիրառում է անկանոն բայերը բանավոր խոսքում հայերեն-</p>

	Անկանոն բայեր	յուրացված բառապաշարը կիրառել “In the Country” տեքստի թարգմանության մեջ: Քննարկվող հարցերը` քանակական և դասական թվականների հակադրությունը անգլերենում և հայերենում ամսաթվերի կազմման համար:		անգլերեն թարգմանությունների միջոցով
28-րդ շաբաթ	Գործնական պարապմունք /4 ժամ/ Անորոշ անցյալ ժամանակաձև (հարցական) “In the Country” տեքստի թարգմանություն Անկանոն բայեր Ճանապարհային երթևեկության նշաններ «Իմ լավագույն արձակուրդը» թեմայով փոքր էսսե	Տեսակը` գործնական պարապմունք <ul style="list-style-type: none"> • Ստեղծագործական մտածողության զարգացման մեթոդներ (փաստարկում, դեդուկցիա, կանխատեսում և այլն) • Էլեկտրոնային ցուցադրություն • Վեր-որոնում Նպատակը` կարողանալ ձևակերպել հարցեր անցյալում կատարված իրադարձությունների վերաբերյալ, անորոշ անցյալ ժամանակաձևը կիրառել անցկացրած լավագույն արձակուրդը նկարագրելու համար: Որպես մասնագիտական բառապաշար ներկայացնել ճանապարհային երթևեկության նշանները: Քննարկվող հարցերը` “No+Gerund” կառույցը որպես արգելք ճանապարհային նշաններում:	<ol style="list-style-type: none"> 1. Ձևափոխման քերականական վարժություններ 2. Խոսքային վարժություններ լեզվական և իմաստային հենարաններով 	Թվարկում է երթևեկության նշանները Վերարտադրում է «Իմ լավագույն արձակուրդը» թեմայով փոքր էսսեն Կարողանում է կազմել հարցեր անցյալում կատարված գործողությունների վերաբերյալ
29-րդ շաբաթ	Գործնական պարապմունք /4 ժամ/ “In the Country” տեքստի վերարտադրում Ճանապարհային	Տեսակը` գործնական պարապմունք <ul style="list-style-type: none"> • Վերարտադրողական մեթոդ • Դերախաղեր • Նախագծերի մեթոդ (մրցույթ) Նպատակը` իրականացնել խոսքային գործունեություն յուրացված բառապաշարի ու	<ol style="list-style-type: none"> 1. Տեքստում գլխավորը տարբերակելու կարողությունների զարգացման վարժություններ 2. Ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բառապաշարի սերտում 	Կարողանում է վերարտադրել փոփոխություններով Անկանոն բայերը կիրառում է բանավոր խոսքում հարցերի պատասխանների ձևով

	<p>Երթևեկության կանոնների խախտում</p> <p>Անկանոն բայեր</p>	<p>Քերականական նյութի հիման վրա ներկայացնելով “In the Country” տեքստը: Դերախաղերի միջոցով ստեղծել բնական իրադրություն ՃՈ ծառայողի կողմից ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների մասին քաղաքացուն իրազեկելու համար:</p>	<p>3. Քերականական կառույցների ընդլայնման վարժություններ</p>	<p>Տիրապետում է ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համատեքստային բառապաշարին</p>
<p>30-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /4 ժամ/</p> <p>Ամփոփիչ թեստ</p> <p>Թեստի վերլուծություն</p> <p>Ապառնի անորոշ ժամանակաձև (հաստատական)</p> <p>“I am a Future Police Officer” տեքստի բառապաշարի վերլուծություն (1-ին մաս)</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Գնդակի մեթոդ • Բացատրական/ցուցադրական մեթոդ • Դասախոսություն/քննարկումներ <p>Նպատակը՝ ստուգել սովորողների՝ անցած լեզվական նյութի իմացությունը, հայտնաբերել առկա դժվարությունները, գտնել լուծման ուղիներ: Ներկայացնել ապառնի անորոշ ժամանակաձևը ապագայում կատարվելիք գործողություններ արտահայտելու համար: Հարստացնել սովորողների մասնագիտական բառապաշարը “I am a Future Police Officer” տեքստի բառապաշարի վերլուծությամբ:</p> <p>Քննարկվող հարցերը՝ հայերենի «կ» եղանակիչի և անգլերենի «will» օժանդակ բայի գաղափարական վերլուծություն:</p>	<p>1. Բառապաշարի և քերականության կրկնողության վարժություններ</p> <p>2. Տեղադրման և խմբավորման քերականական վարժություններ</p> <p>3. Բառային քարտեզի կազմում</p>	<p>Տիրապետում է անցած քերականական նյութին և բառապաշարին, հնարավորինս կիրառում է բանավոր խոսքում</p> <p>Կարողանում է արտահայտել ապագայում կատարվելիք գործողություն</p> <p>Տիրապետում է “I am a Future Police Officer” տեքստի բառապաշարին (1-ին մաս)</p>
<p>31-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /4 ժամ/</p> <p>Ապառնի անորոշ ժամանակաձև (ժխտական)</p> <p>“I am a Future Police</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Բացատրական/ցուցադրական մեթոդ • Ստրերի ճառագայթաձև տարափ • Դերախաղ <p>Նպատակը՝ կարողանալ արտահայտել ապառնի համատեքստում գործողությունների ժխտում: Հարստացնել մասնագիտական</p>	<p>1. Քերականական կառույցի ձևափոխման վարժություններ</p> <p>2. Լեզվական անձանոթ նյութի օգտագործման հմտությունների զարգացման վարժություններ</p> <p>3. Երկխոսության կազմում «Երթևեկության անվտանգություն» թեմայով</p>	<p>Տիրապետում է “I am a Future Police Officer” տեքստի բառապաշարին (2-րդ մաս)</p> <p>Կարողանում է ժխտել ապառնի անորոշ ժամանակաձևով կազմված կառույցները</p>

	<p>Officer” տեքստի բառապաշարի վերլուծություն (2-րդ մաս)</p> <p>Երթևեկության անվտանգություն</p>	<p>բառապաշարը երթևեկության անվտանգությանը վերաբերող բառապաշարով, հասնել այն վերջնարդյունքին, որ արտաքին ծառայության ժամանակ ոստիկանության ծառայողը կարողանա քաղաքացուն ճիշտ կողմնորոշել երթևեկության անվտանգության մասով:</p> <p>Քննարկվող հարցերը՝ Անորոշ ապառնի ժամանակաձևի ժխտականը հայերենում և անգլերենում:</p>		<p>Տիրապետում է երթևեկության անվտանգության համատեքստային բառապաշարին</p>
<p>32-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /4 ժամ/</p> <p>Ապառնի անորոշ ժամանակաձև (հարցական)</p> <p>“I am a Future Police Officer” տեքստի թարգմանություն և վերարտադրում</p> <p>«Հաջորդ շաբաթվա իմ անելիքները» թեմայով փոքր էսսե</p> <p>Մասնավոր հարցեր ապառնի անորոշ ժամանակաձևով</p> <p>Դասընթացի ամփոփում</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Բացատրական/ցուցադրական մեթոդ • Ստեղծագործական մտածողության զարգացման մեթոդներ (փաստարկում, դեդուկցիա, կանխատեսում և այլն) • Բացատրական թարգմանություն • Վերարտադրողական մեթոդ • Լսողական վարժանքներ <p>Նպատակը՝ կարողանալ ձևակերպել ընդհանուր հարցեր ապառնի համատեքստում կատարվելիք գործողությունների վերաբերյալ: Յուրացված մասնագիտական բառապաշարը կիրառել “I am a Future Police Officer” տեքստի թարգմանության մեջ: Հասնել այն վերջարդյունքին, որ սովորողը կարողանա ներկայացնել իր ապագա ծրագրերը յուրացված բառապաշարով ու քերականությամբ: Իրականացնել խոսքային գործունեություն՝ վերաշարադրելով “I am a Future Police Officer” տեքստը, հասնել անցած լեզվական նյութի առավելագույն լսողական ընկալմանը, կարողանալ ձևակերպել</p>	<ol style="list-style-type: none"> 1. Հարցերի կազմում 2. Տեքստի գրավոր թարգմանություն 3. Փոքր էսսե 4. Նախորդ դասերի ընթացքում յուրացված լեզվական նյութի ամփոփիչ առաջադրանքներ 5. Տեքստի վերաշարադրում 6. Ինքնուրույն աշխատանք 	<p>Կարողանում է բանավոր ներկայացնել «Հաջորդ շաբաթվա իմ անելիքները» թեմայով փոքր էսսե</p> <p>Կազմում է հարցեր ապառնի անորոշ ժամանակաձևով</p> <p>Կարողանում է թարգմանել “I am a Future Police Officer” տեքստը</p> <p>Վերարտադրում է տեքստը իր բառերով</p> <p>Կազմում է մասնավոր հարցեր ապառնի անորոշ ժամանակաձևով</p>

		<p>մասնավոր հարցել ապառնի համատեքստում: Ամփոփել ուստարվա ընթացքում ձեռք բերված լեզվական գիտելիքները, վերհանել առկա դժվարությունները, կատարել սխալների վերջնական վերլուծություն և ուղղում: 1-ին կուրսի դասընթացից ձեռք բերված լեզվական գիտելիքների ակտիվացում, ամփոփում:</p> <p>Քննարկվող հարցերը՝ շրջուն շարադասությունը անգլերենում և հայերեն համարժեքը:</p>		
<p>2-րդ կուրս 1-ին կիս</p> <p>33-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /2 ժամ/ Ածական 1-ին դերբայ “The Seasons and the Weather” տեքստի բառապաշարի վերլուծություն Փոստ, հեռագիր, հեռախոս</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Բացատրական/ցուցադրական մեթոդ • Դերախաղեր • Ստագրոհ <p>Նպատակը՝ տարվա եղանակների նկարագրության համար անհրաժեշտ բառապաշարի տիրապետում, համաժամանակյա գործողությունների արտահայտում ածական 1-ին դերբայի միջոցով: Փոստային հաղորդակցության ոլորտին վերաբերող մասնագիտական բառապաշարի հարստացում:</p> <p>Քննարկվող հարցերը՝ նախադաս և հետադաս ածական 1-ին դերբայի հայերեն համարժեք թարգմանության ձևերը:</p>	<ol style="list-style-type: none"> 1. Հարցերի աղյուսակի կազմում 2. Ճիշտ ժամանակաձևի լրացման քերականական վարժություններ 3. Ընլայնման քերականական վարժություններ 4. Տեքստի բառապաշարի սերտում 	<p>Բացատրում է “The Seasons and the Weather” տեքստի անձանոթ բառերը</p> <p>Կիրառում է ածական 1-ին դերբայը քերականական վարժություններում</p> <p>Տիրապետում է «Փոստ, հեռագիր, հեռախոս» համատեքստային բառապաշարին</p>
<p>34-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /2 ժամ/ Ածական անուն: Ածականի</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Բացատրական/ցուցադրական մեթոդ • Էլեկտրոնային ցուցադրում • Դերախաղեր • Բառային քարտեզ 	<ol style="list-style-type: none"> 1. Պատասխանել տրված հարցերին տեսանյութի դիտումից հետո 2. Տարբերակման քերականական վարժություններ 	<p>Կարողանում է համեմատել առարկաներ ածականի համեմատության աստիճանների գործածության միջոցով</p>

	<p>համեմատության աստիճանները</p> <p>“The Seasons and the Weather” տեքստի բառապաշարի վերլուծություն</p> <p>Սպորտ, զվարճանք, հանգիստ</p>	<p>Նպատակը՝ կարողանալ արտահայտել առավել, նվազ կամ նման հատկանիշներ, հակադրել տարբեր գոյականներ ըստ հատկանիշների:</p> <p>Քննարկվող հարցերը՝ հայերենի «այնքան...որքան», «նույնքան...որքան» և անգլերենի “as (so)...as” կառույցները:</p>	<p>3. Բառային աշխատանք</p>	<p>Տիրապետում է «Սպորտ, զվարճանք, հանգիստ» համատեքստային բառապաշարին</p> <p>Կիրառում է “The Seasons and the Weather” տեքստի բառապաշարը նախադասությունների կազմման համար</p>
<p>35-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /2 ժամ/</p> <p>Եղանակավորող բայեր</p> <p>“The Seasons and the Weather” տեքստի թարգմանություն</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Բացատրական/ցուցադրական մեթոդ • Բացատրական թարգմանություն • Ճառագայթաձև հարցում <p>Նպատակը՝ կարողանալ արտահայտել գործողության կատարման բնույթը պարտադրանք, ինդրանք, թույլատրություն, խորհուրդ: Յուրացված բառապաշարը կիրառել “The Seasons and the Weather” տեքստի թարգմանության մեջ:</p> <p>Քննարկվող հարցերը՝ եղանակավորող բայերի առանձնահատկությունները անգլերենում և հայերեն համարժեքների բացակայությունը որոշ դեպքերում:</p>	<ol style="list-style-type: none"> 1. Տեքստի գրավոր թարգմանություն 2. Եղանակավոր բայերի տեղադրման քերականական վարժություններ 3. Կռահման վարժություններ 	<p>Եղանակավորող բայերը կրառում է բանավոր խոսքում հարցերի պատասխանների տեսքով</p> <p>Կարողանում է բանավոր թարգմանել “The Seasons and the Weather” տեքստը</p>
<p>36-րդ շաբաթ</p>	<p>Գործնական պարապմունք /2 ժամ/</p> <p>“տո” ժխտական նախածանցը</p> <p>“The Seasons and the</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • Դասախոսություն/քննարկում • Վերարտադրողական մեթոդ • Պրոբլեմային ուսուցում <p>Նպատակը՝ ծավալել խոսքային</p>	<ol style="list-style-type: none"> 1. Բառապաշարի և քերականության կրկնողության վարժություններ 2. Խոսքային լեզվական վարժություններ առանց հենարանի (տրված է թեման 	<p>Կարողանում է իր բառերով բանավոր վերարտադրել “The Seasons and the Weather” տեքստը</p>

